ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/113/2024

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 07 մայիսի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2024 թվականի մայիսի 7-ին քննելով ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ղեկավար Տավրոս Էդիկի Սափեյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/113/2024 գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված իրավակարգավորումներով, հիմք ընդունելով 2023 թվականի դեկտեմբերի 8-ի «Հետք» լրատվամիջոցի՝ *«Թալինի ղեկավարը մոտ 16 մլն դրամի պայմանագիր է կնքել իր ընտանիքին պատկանող ընկերության հետ»* վերտառությամբ հրապարակումը՝

իրականացրել է ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ղեկավար Տավրոս Էդիկի Սափեյանի՝ 2023 թվականի մայիսի 10-ին ներկայացված 2022 թվականի պաշտոնական պարտականություններն ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրի և 2023 թվականի մայիսի 15-ին ներկայացված 2022 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրի՝ (այսուհետ՝ Հայտարարագրեր) «Ե. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնում հայտարարագրված տվյալների ստուգում, որի արդյունքում պարզել է.

1.2 Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ «Սափեյան եղբայրներ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ) (այսուհետ նաև՝ Ընկերություն) մասնակից է հանդիսանում Էդիկ Հովհաննեսի Սափեյանը՝ 50% բաժնեմասնակցությամբ, մինչդեռ, Տավրոս Էդիկի Սափեյանի կողմից ներկայացված Հայտարարագրերի «Ե. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում ներկայացված չէ Էդիկ Սափեյանի բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալը:

1.3 Հանձնաժողովը, Տավրոս Էդիկի Սափեյանի Հայտարարագրերում չներկայացված տվյալների հիմքով Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ նախաձեռնելու՝ 2024 թվականի ապրիլի 15-ի որոշման կապակցությամբ 2024 թվականի ապրիլի 25-ին Տավրոս Էդիկի Սափեյանին հասցեագրել է թիվ 01/1284-2024 ծանուցումը՝ 2024 թվականի մայիսի 3-ին, ժամը՝ 11:00-ին հրավիրելով Հանձնաժողով վերոնշյալ առերևույթ խախտման վերաբերյալ վարչական իրավախախտման մասին արձանագրություն կազմելու, իսկ 2024 թվականի մայիսի 7-ին, ժամը՝ 11:00-ին՝ առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի նյութերի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու:

1.4 2024 թվականի մայիսի 3-ին պատշաճ ծանուցված վարույթի մասնակցի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/128/24

արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.5 2024 թվականի մայիսի 6-ին վարույթի մասնակցի կողմից ստացված թիվ Մ-2066-2024 գրությամբ ներկայացվել է պարզաբանում, որով վարույթի մասնակցի ներկայացուցիչը միաժամանակ միջնորդել է գործի քննությունն իրականացնել Տավրոս Սափեյանի և իր բացակայությամբ:

1.6 2024 թվականի մայիսի 7-ին գործի քննությունն իրականացվել է պատշաճ ծանուցված վարույթի մասնակցի և վերջինիս ներկայացուցչի բացակայությամբ, գործի քննությունը հետաձգելու միջնորդություն չի ներկայացվել:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/113/2024 գործի շրջանակներում արձանագրված առերևույթ իրավախախտման առնչությամբ 2024 թվականի մայիսի 6-ին Հանձնաժողովում մուտքագրված թիվ Մ-2066-2024 գրությամբ վարույթի մասնակցի ներկայացուցիչը ներկայացրել է պարզաբանում (այսուհետ՝ Պարզաբանում) առ այն, որ Էդիկ Սափեյանը 2024 թվականի ապրիլի 3-ին Հանձնաժողով է ներկայացրել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում՝ իր կողմից 2023 թվականի մայիսի 17-ին ներկայացված 2022 թվականի հայտարարագրի եկամուտներ բաժնի շահաբաժին տողում թույլ տրված բացթողումը, այն է՝ վերը նշված առևտրային կազմակերպությունից ստացված 4.790.314 ՀՀ դրամ եկամուտը արտացոլելու խնդրանքով:

Միաժամանակ, վարույթի մասնակցի ներկայացուցիչը, նշելով, որ թեև ներքոնշյալը քննարկվող իրավախախտման օբյեկտիվ կողմին վերաբերելի չէ, հայտնել է, որ վարույթի մասնակցի նկատմամբ Հանձնաժողովի կողմից Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված խախտում թույլ տալու կապակցությամբ վարույթ իրականացնելու ընթացքում 2024 թվականի մարտի 22-ին Թալինի համայնքապետարանի պաշտոնական կայքում հրապարակվել է հայտարարություն՝ շահերի բախման իրավիճակի և Տավրոս Սափեյանի հետ մերձավոր ազգակցությամբ

կապված անձանց /հայր/ «Սափեյան եղբայրներ» ՍՊ Ընկերության իրական շահառուներ լինելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից՝ վերջինս խնդրել է կատարված արարքին գնահատական տալիս հաշվի առնել վերոնշյալը, քանի որ պետք է արձանագրել, որ Էդիկ Սափեյանի կողմից վերը նշված դիմումով ներկայացված տվյալներն այն անհրաժեշտ տվյալներն են, որոնք հնարավորություն են տալիս պատշաճ վերլուծել Տավրոս Սափեյանի հայտարարագրերը: Ներկայացված տվյալներով ապահովվել է նաև վերջինիս և նրա հետ փոխկապակցված անձի գույքային վիճակի վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը, գործնականում ապահովվել է նաև հանրային հաշվետվողականությունը: Նշել է նաև, որ այս իրավախախտմամբ էական վնաս չի պատճառվել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, հասարակությանը և պետությանը: Միաժամանակ, հավելել է, որ արարքը որակելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ վարույթի մասնակիցը չի վիճարկում իրեն մեղսագրվող իրավախախտումը և վերոգրյալով պայմանավորված՝ խնդրել է տվյալ խախտումը որակել որպես նվազ նշանակություն ունեցող և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածի հիմքով Տավրոս Սափեյանին վարչական պատասխանատվությունից ազատել և վարչական գործի վարույթը կարճել:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/113/2024 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Էդիկ Սափեյանը, 1999 թվականի հոկտեմբերի 7-ից հանդիսանում է Ընկերության մասնակից՝ 50% բաժնեմասնակցությամբ:

3.2 Տավրոս Էդիկի Սափեյանի կողմից ներկայացված Հայտարարագրերում առկա տվյալների համաձայն՝ Էդիկ Սափեյանը հանդիսանում է Տավրոս Էդիկի Սափեյանի հետ համատեղ բնակվող չափահաս անձ (հայրը):

3.3 Տավրոս Էդիկի Սափեյանի կողմից ներկայացված Հայտարարագրերի «Ե. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում ներկայացված չէ Էդիկ Սափեյանի բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալը:

3.4 2024 թվականի մարտի 26-ին Հանձնաժողովի կողմից ընդունվել է Տավրոս Սափեյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով՝ խախտման կապակցությամբ վարչական տույժ կիրառելու մասին թիվ ՎԻՎ/70/24 որոշումը: Վկայակոչված գործում առկա փաստական տվյալների համաձայն՝ Տավրոս Սափեյանը, որպես պատվիրատուի ղեկավար (Արագածոտնի մարզի Թալին համայնքի ղեկավար) իր լիազորությունների շրջանակում համայնքի կարիքների համար մատակարարման պայմանագիր է կնքել Օրենքի իմաստով իր հետ փոխկապակցված անձի՝ հոր բաժնեմասնակցությամբ առևտրային կազմակերպության («Սափեյան Եղբայրներ» ՍՊԸ-ի) հետ, որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, մինչդեռ, որպես համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ այդ մասին «Հանրային ծառայության» մասին օրենքով սահմանված կարգով 10-օրյա ժամկետում գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով՝ այդ կերպ թույլ տալով «Հանրային ծառայության» մասին օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի առերևույթ խախտում:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ղեկավար Տավրոս Էդիկի Սափեյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 42-րդ հոդվածի (Շահերի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի համաձայն՝ հայտարարագրի՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում»

բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն կամ որի իրական շահառու են հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) չափը, մասնակցությունը ձեռք բերելու կամ իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն: Սույն մասի իմաստով իրական շահառու է համարվում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի հիման վրա իրավաբանական անձի իրական շահառու հանդիսացող անձ:

4.3 Օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը ներկայացվում են պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրվա դրությամբ: Տարեկան հայտարարագիրը ներկայացվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից՝ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար:

4.4 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.9 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.10 Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի համաձայն՝ **շահաբաժին է հանդիսանում** կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կամ փայահավաք կապիտալում մասնակցությունից (բաժնետոմսից, բաժնեմասից, փայաբաժնից) կամ համատեղ գործունեությունից, որպես շահույթի բաշխում (այդ թվում՝ միջանկյալ բաշխում), մասնակցի ստացած կամ ստացման ենթակա եկամուտը:

4.11 Հարկային օրենսգրքի 109-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ շահաբաժինների տեսքով եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված բաժնետերերի (փայատերերի) ժողովի կողմից հաշվետու տարվա գործունեության արդյունքներով ստացված շահույթից շահաբաժինների բաշխման մասին որոշման ընդունման օրը:

4.12 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են նաև հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները: Մասնավորապես, շահերի հայտարարագրի դեպքում՝ կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն կամ որի իրական շահառու են հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության չափը, հավատարմագրային կառավարման հանձնված լինելը, ընտանիքի անդամի ներկայացվածությունը կազմակերպության կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում, պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկություններ:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման **ենթակա տվյալը** լրացվել է

սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող ***հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:***

Սույն գործով ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ղեկավար Տավրոս Էդիկի Սափեյանը Հայտարարագրերում ***անզգուշությամբ*** ներկայացրել է հետևյալ ոչ ամբողջական տվյալը.

Հայտարարագրերի «Ե. Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում ներկայացված չէ վերջինիս հետ համատեղ բնակվող չափահաս անձ՝ Էդիկ Սափեյանի Ընկերությունում 50% բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալը:

Նշված արարքով Տավրոս Էդիկի Սափեյանը ***խախտել է*** Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Հետևաբար, Հայտարարագրերում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Հաշվի առնելով արձանագրված իրավախախտման նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջները՝ սույն գործով առկա փաստերից հետևում է, որ Տավրոս Սափեյանը Հայտարարագրերում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալ, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարք:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Անդրադառնալով արձանագրված առերևույթ իրավախախտման առնչությամբ վարույթի մասնակցի կողմից 2024 թվականի մայիսի 6-ին Հանձնաժողովում մուտքագրված թիվ Մ-2066-2024 գրությամբ ներկայացված դիրքորոշմանն առ այն, որ Տավրոս Էդիկի Սափեյանի հետ համատեղ բնակվող չափահաս անձ Էդիկ Սափեյանը 2024 թվականի ապրիլի 3-ին Հանձնաժողով ներկայացված՝ հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում է ներկայացրել իր կողմից 2023 թվականի մայիսի 17-ին ներկայացված 2022 թվականի հայտարարագրի եկամուտներ բաժնի շահաբաժին տողում թույլ տրված բացթողումը՝ առևտրային կազմակերպությունից ստացված 4,790,314 ՀՀ դրամ եկամուտը արտացոլելու մասին՝ արձանագրում է, որ Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագրի՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում, ի թիվս այլ տվյալների՝ նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն կամ որի իրական շահառու են հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) չափը, մասնակցությունը ձեռք բերելու կամ իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին: Այս առնչությամբ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ վկայակոչված՝ Օրենքով սահմանված տվյալները պաշտոնատար անձի տարեկան հայտարարագրում ենթակա են հայտարարագրման յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից՝ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտարարագրում թվարկված տվյալների ներկայացման միջոցով սպառիչ և ամբողջական կերպով արտացոլվում են ինչպես հայտարարատու պաշտոնատար անձի, այնպես էլ նրա ընտանիքի անդամների բաժնեմասնակցության առնչությամբ անհրաժեշտ տվյալները, օրենսդիրը սահմանել է պարտադիր ներկայացման ենթակա տվյալների շրջանակը կոնկրետ հաշվետու ժամանակահատվածի՝ սույն գործով 2022 թվականի հունվարի 1-ից՝ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար: Մինչդեռ, հայտարարագրում, որպես եկամուտ ներկայացվող շահաբաժնի վերաբերյալ տվյալը որպես այդպիսին դեռևս չի կարող վկայել, որ անձը, տվյալ պարագայում ընտանիքի անդամը հաշվետու ժամանակահատվածում Ընկերությունում ունեցել է բաժնեմասնակցություն, հետևաբար՝ Օրենքով պահանջվող շահերի հայտարարագրի համապատասխան բաժնում հայտարարատուի կողմից ներկայացվող համարժեք տվյալ չի կարող հանդիսանալ:

Այսպես, Հարկային օրենսգրքի 109-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ շահաբաժինների տեսքով եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված բաժնետերերի (փայատերերի) **ժողովի կողմից հաշվետու տարվա գործունեության արդյունքներով ստացված շահույթից** շահաբաժինների բաշխման մասին որոշման ընդունման օրը:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընկերությունն իրավունք ունի ոչ հաճախ, քան եռամսյակը մեկ անգամ իրականացնելու իր շահույթի բաշխում ընկերության մասնակիցների միջև: Շահույթի բաշխման մասին որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից, իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ շահույթը բաշխվում է շահույթի բաշխման մասին որոշումն ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Վկայակոչված դրույթների համադրությունից և վերլուծությունից բխում է, որ առևտրային կազմակերպությունում ունեցած բաժնեմասնակցությունից շահաբաժին ստանալու իրավունքը կարող է ծագել ինչպես ընթացիկ տարվա, այնպես էլ ընկերության նախորդ տարիներին իրականացված գործունեությունից ստացված շահույթից՝ համապատասխան ժամանակահատվածի ամփոփման արդյունքում ընկերության մասնակիցներին

շահաբաժիններ բաշխելու վերաբերյալ որոշման ընդունմամբ: Նշվածից բխում է, որ առկա չէ ընկերության հաշվետու տարվա շահույթից նույն տարում շահաբաժին բաշխելու օրենսդրական պարտադիր պահանջ: Հետևաբար, հայտարարատու պաշտոնատար անձանց կողմից ընկերության շահույթից հաշվետու տարվա ընթացքում բաշխված շահաբաժնի վերաբերյալ (փաստացի ստացված եկամուտ) տվյալները եկամուտների հայտարարագրում ներկայացնելը չի կարող հանդիսանալ որպես առևտրային կազմակերպությունում բաժնեմասնակցություն ունենալու վերաբերյալ հայտարարագրման ենթակա տվյալ: Ավելին, օրենսդրությամբ առկա չէ արգելք, առ այն, որ անձն ընթացիկ տարում այլևս չունենալով առևտրային կազմակերպությունում բաժնեմասնակցություն, փաստացի ստանա շահաբաժին ընկերության այն հաշվետու տարվա ստացած շահույթից, որի ընթացքում վերջինս ունեցել է ընկերության բաժնետիրոջ (մասնակցի) կարգավիճակ:

Հետևաբար, Էդիկ Սափեյանի կողմից ստացված շահաբաժինը կարող է հանդիսանալ հաշվետու տարվա ընթացքում հայտարարագրման ենթակա տվյալ՝ որպես փաստացի ստացված եկամուտ, մինչդեռ այն չի կարող փաստել Էդիկ Սափեյանի՝ հաշվետու տարում ունեցած բաժնեմասնակցությունը:

Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն գործով էական հանգամանք է այն, որ Էդիկ Սափեյանի Ընկերությունում ունեցած 50% բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալը բացակայում է նաև վերջինիս կողմից ներկայացված տարեկան հայտարարագրի «Բ.3 Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն, որ իր կողմից նախորդիվ կայացրած որոշումներով շահերի հայտարարագրում ոչ ամբողջական տվյալների հայտարարագրման հետ կապված՝ նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքը, երբ նույն հայտարարագրի «Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում ներկայացվել է հայտարարատուի բաժնեմասնակցությունը առևտրային կազմակերպությանը, սակայն «Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի «Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում չի ներկայացվել (ՎԻՎ/27/2022): Նշված գործով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում ներկայացված տվյալները հանդիսանում են այն անհրաժեշտ և

համակարգային առումով փոխկապակցված տվյալները, որոնք բավարար են պաշտոնատար անձի հայտարարագրերի պատշաճ վերլուծությունն իրականացնելու համար: Նշվածից բացի, վերոնշյալ բաժնում ներկայացված տվյալներով ապահովվել է նաև պետական պաշտոն զբաղեցնող անձի իրական գույքային դրության վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը, որպիսի պայմաններում գործնականում չի խաթարվել հանրային հաշվետվողականությունը: Նշվածով պայմանավորված՝ տվյալ խախտումն որակվել է որպես նվազ նշանակություն ունեցող, ինչը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 21-րդ հոդվածի ուժով նշված խախտման կապակցությամբ վարչական պատասխանատվությունից ազատելու և գործի վարույթը կարճելու հիմք է հանդիսացել:

Մեկ այլ գործով Հանձնաժողովը նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքը, երբ պաշտոնատար անձը հայտարարագրի Դ.1. «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում չի հայտարարագրել իր մասնակցությունն առևտրային կազմակերպությունում, սակայն գործում առկա փաստերի համաձայն հաստատվել է, որ առևտրային կազմակերպության գործունեությունը ժամանակավոր դադարեցված է (ՎԻՎ/05/22): Հանձնաժողովը գտել է, որ կազմակերպության գործունեությունը ժամանակավոր դադարեցված լինելու հանգամանքով պայմանավորված՝ արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Մինչդեռ, սույն գործով քննարկվող փաստական հանգամանքները տարբերվում են վկայակոչված գործերում առկա հանգամանքներից:

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Տավրոս Էդիկի Սափեյանի հետ համատեղ բնակվող չափահաս անձ՝ Էդիկ Սափեյանի կողմից 2023 թվականի մայիսի 17-ին ներկայացված 2022 թվականի հայտարարագրի եկամուտներ բաժնի շահաբաժին տողում փոփոխություն կատարելու պարագայում անգամ **Ընկերությունից ստացված շահաբաժնի վերաբերյալ տվյալի միջոցով չի արտացոլվում Էդիկ Սափեյանի՝ հաշվետու ժամանակահատվածում** Ընկերությունում ունեցած 50% բաժնեմասնակցության վերաբերյալ Օրենքով պահանջվող տվյալը:

Միաժամանակ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ տվյալ պարագայում, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի

կապակցությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ սույն գործն իրավասու մարմնի կողմից քննվում և վարչական պատասխանատվության միջոցի կիրառման հարցը լուծվում է արդեն իսկ կատարված իրավախախտման կապակցությամբ: Սույն գործով իրավախախտումը կատարվել է պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող չափահաս անձի բաժնեմասնակցության վերաբերյալ ոչ ամբողջական տվյալներ պարունակող վարույթի մասնակցի կողմից Հայտարարարագրերի ներկայացմամբ՝ 2023 թվականի մայիսի 10-ին և 2023 թվականի մայիսի 15-ին: Իսկ վերջինիս ընտանիքի անդամը՝ Էդիկ Սափեյանն իր կողմից տարեկան հայտարարագիրը ներկայացրել է 2023 թվականի մայիսի 17-ին, որում Ընկերությունում բաժնեմասնակցության վերաբերյալ որևէ վերաբերելի տվյալ արտացոլված չի եղել: Վերջինս Ընկերությունից ստացված շահաբաժնի մասին տվյալը իր տարեկան հայտարարագրում ներկայացնելու խնդրանքով Հանձնաժողով է դիմել բացառապես 2024 թվականի ապրիլի 3-ին, Տավրոս Սափեյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով՝ խախտման կապակցությամբ Հանձնաժողովի կողմից 2024 թվականի մարտի 26-ին վարչական տույժ կիրառելու մասին թիվ ՎԻՎ/70/24 որոշման ընդունումից հետո, որպիսի հանգամանքը ևս մեկ անգամ ընդգծում է պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող չափահաս անձի բաժնեմասնակցության վերաբերյալ ամբողջական տվյալների ներկայացման կարևորությունը: Ավելին, նույնիսկ վկայակոչված որոշման ընդունումից հետո վարույթի մասնակցի կողմից իր հետ համատեղ բնակվող չափահաս անձի բաժնեմասնակցության վերաբերյալ տվյալի՝ ներկայացված Հայտարարագրում ներառման կապակցությամբ փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում Հանձնաժողով չի ներկայացվել:

Սույն գործով հայտնաբերվել և արձանագրվել է հայտարարատու պաշտոնատար անձի կողմից իր ընտանիքի անդամի առևտրային կազմակերպությունում բաժնեմասնակցության վերաբերյալ չհայտարարագրված տվյալ, իսկ վերջինիս ընտանիքի անդամի կողմից դիմումով հայցվող փոփոխության կատարման պարագայում՝ եկամուտներ բաժնում Ընկերությունից ստացված շահաբաժնի վերաբերյալ տվյալի ներկայացմամբ անգամ, ըստ էության, չի բացահայտվում հայտարարագրման ենթակա ***հաշվետու***

ժամանակահատվածում պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող չափահաս անձի՝ հոր առնչությունը առևտրային կազմակերպությանը, որպիսի պայմաններում կուղենշվեր շահերի հայտարարագրման օրենսդրի կողմից սահմանված նպատակը: Այս կերպ գործնականում խաթարվում է հանրային հաշվետվողականությունը, հայտարարագրված տվյալների ամբողջականության համադրման հնարավորությունը՝ պաշտոնատար անձի կողմից հնարավոր շահերի բախման իրավիճակում գործողություն կատարելու կամ որոշում ընդունելու դեպքերի բացահայտման հնարավորության առումով: Ավելին՝ մինչև 2024 թվականի ապրիլի 3-ին ընտանիքի անդամի կողմից համապատասխան դիմումը Հանձնաժողով ներկայացնելը, հայտարարագրված տվյալներում առհասարակ բացակայել է պաշտոնատար անձի հետ համատեղ բնակվող չափահաս անձի՝ հոր առնչությունը Ընկերության հետ բացահայտելու հնարավորությունը:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (***փուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով***), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն գործով վարչական վարույթի մասնակցի գործողություններում առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող, ինչպես նաև Օրենսգրքի 34-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ղեկավար Տավրոս Էդիկի Սափեյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ **200 000** (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Տավրոս Էդիկի Սափեյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Տավրոս Էդիկի Սափեյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրերի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ